ԿՈՒՍԱԿՐՈՆ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Մայիսի 13-ին, կիրակի օրը, Ստամբուլի Բեյօղլու թաղի հայոց ս. Երրորդություն եկեղեցում Կ. Պոլսի ամենապատիվ տ. Շնորհք սրբազան պատրիարքը կատարում է Միևաս սարկավագ Մութաֆյանի կուսակրոն քահանայական ձեռնադրությունը:

Ս. պատարագը մատուցել է տ. Գառնիկ քհն. Գամճյանը, իսկ ձեռնադրության խարտավիլակությունը կատարել է տ. Բարթող ավագ քհն. Խրքաճյանը: Եկմալյան մշակումով ս. պատարագի երգեցողությունը կատարվել է Բեյօղլուի Ասողիկ դպրաց դաս-երգչախմբի կողմից՝ Ժիրայր Արսլանյանցի ղեկավարությամբ:

Ս. պատարագին ներկա են եղել, Բեյօղլուի հայ հավատացյալ ժողովրդից բացի, Կ. Պոլսի մյուս թաղերից և անգամ Ամերիկայի Միացյալ Նահանգներից ժամանած հայեր ևս, որոնք ջերմեռանդությամբ հետևել են սրբազան արարողություններին:

Ձեռնադրյալը, որ վերանվանվել է տ. Մեսրոպ աբեղա, ծնվել է Ստամբուլում 1956 թվականին: Իր նախնական կրթությունը ստացել է տեղի անգլիկան լիցեյում, ապա 1974 թվականին մեկնել է Արևմտյան Գերմանիայի Վյուրտեմբերգ քաղաք՝ լրացնելու համար իր միջնակարգ կրթությունը տեղի ամերիկյան կոլեջում: Այն ավարտելուց հետո, 1975 թվականին մեկնել է Ամերիկայի Միացյալ Նահանգներ, ուր, շարունակելով իր բարձրագույն կրթությունը Մեմֆիսի համալսարանում, հետևել է պատմագիտությանը և ընկերաբանությանը:

Իր ուսմանը զուգընթաց տ. Մեսրոպ աբղ. Մութաֆյանը մասնակցություն է բերել հայ համայնքների հասարակական կյանքին՝ ուր էլ որ գտնվել է նա: Դեռ մանկուց հաճախել է իր թաղի եկեղեցի և իբրև դպիր մասնակցել ժամասացություններին և արարողություններին:

1978 թվականին ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի թեմական առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը, գնահատելով ժրաջան երիտասարդի եռանդը և նրա կատարած եկեղեցական-հասարակական գործունեությունը Մեմֆիսի հայ համայնքի ծոցում, նրան կարգում է տեղի հայոց հոգևոր մատակարար:

Ձեռնադրվելուց հետո տ. Մեսրոպ աբեղան իր քառասունքը անցկացնելու է Բեյօղլուի հայոց ս. Երրորդություն եկեղեցում:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նրան և մաղթում պտղաբեր գործունեություն իր ընտրած ասպարեզում՝ դառնալու համար «Մշակ առանց ամօթոյ», հովանավորության ներքո ամենապատիվ տ. Շնորհք սրբազան պատրիարքի, սրտեռանդն նվիրվելու համար իր խնամքին հանձնված հայ հավատացյալ ժողովրդի հոգևոր սպասին: